ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3726-Ա

«04» մայիսի 2012 թ.

ԵՐԵՎԱՆԻ ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ. 62 ՇԵՆՔԻ Հ. 6 ԲՆԱԿԱՐԱՆԻ՝ 37,8 ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կենտրոն վարչական շրջան են դիմել Էռնեստ Բաբայանը, Գայանե Մաիլյանը, Մարինե Հովհաննիսյանը և Ալեն Սիմոնյանը՝ Երևանի Աբովյան փողոցի հ.62 շենքի հ.6 բնակարանի՝ 37,8քմ ընդհանուր մակերեսով ընդհանուր կոմունալ և օժանդակ հարմարությունները իրենց անվամբ մասնավորեցնելու խնդրանքով:

Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 9-ի հ.345-Ն որոշումը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով.

1. Երևան համայնքի սեփականություն համարվող (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 22.11.2011թ. հ.2823069 վկայական) Երևանի Աբովյան փողոցի հ.62 շենքի հ.6 բնակարանի՝37,8քմ ընդհանուր մակերեսով կոմունալ և օժանդակ հարմարություններից 16,7քմ նվիրել նույն բնակարանի բնակիչներ՝ Մարինե Հովհաննիսյանին և Ալեն Սիմոնյանին, 17,5 քմ մակերեսը՝ Էռնեստ Բաբայանին և Գայանե Մաիլյանին որպես սեփականություն (այսուհետ նվիրառուներ), իսկ 3,6 քմ մակերեսով միջանցքը նվիրել Էռնեստ Բաբայանին, Գայանե Մաիլյանին, Մարինե Հովհաննիսյանին և Ալեն Սիմոնյանին որպես ընդհանուր համատեղ սեփականություն /հիմք՝ ԿՎՇ-ի բնակարանային հարցերի հանձնաժողովի 22.11.2011թ. հ. 23/35-Ս-488 եզրակացություն/:

2. Լիազորել Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարին՝ Երևանի քաղաքապետի անունից, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, նվիրառուների հետ կնքել բնակարանի կոմունալ և օժանդակ հարմարությունների նվիրատվության մասին պայմանագիր:

3. Ընդունել ի գիտություն, որ նվիրատվության մասին պայմանագրի պետական գրանցման և նոտարական վավերացման հետ կապված ծախսերը կատարվում են նվիրառուների կողմից:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից վեց ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի վրա:

6. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

«22» 11 2011թ.
N 23/35-4488.

ք.Երևան, Տերյան փող, հ.44
հեռ. 54-35-45

Կենտրոն վարչական շրջանի բնակարանային հարցերի հանձնաժողովի Եզրակացություն

Աբովյան փողոցի թիվ 62 շենքի թիվ 6 ընդհանուր կոմունալ հարմարություններով բնակարանը 34,6 քմ մակերեսով երկու սենյակի համասեփականատերերն են՝ Բաբայան Էռնեստ և Մայիլյան Գայանեն, իսկ 32,0 քմ երկու սենյակի համասեփականատերերն են՝ Մարինե Հովհաննիսյանը և Ալեն Սիմոնյանը:

Տեղազննությունից պարզվել է, որ բնակարանի ընդհանուր կոմունալ հարմարություններից 9,0 քմ պատշգամբը, 5,5 քմ սանհանգույցը և 2,2 քմ միջանցքը ընդամենը 16,7 քմ փաստացի սահմանազատված օտագործվում է Մարինե Հովհաննիսյանի և Ալեն Սիմոնյանի ընտանիքի կողմից, իսկ 6,6 քմ պատշգամբը, 1,1 և 3,2 քմ սանհանգույցը, 1,2 քմ միջանցք 5,4 քմ խոհանոց ընդամենը 17,5 քմ փաստացի սահմանազատված օգտագործվում է Էռնեստ Բաբայանի և Գայանե Մայիլյանի ընտանիքի կողմից:Իսկ 3,6 քմ միջանցքը օգտագործվում է որպես համատեղ երկու ընտանիքների կողմից:

Հանձնաժողովը դրական եզրակացությամբ ներկայացնում է Աբովյան փողոցի թիվ 62 շենքի թիվ 6 բնակարանի ընդհանուր կոմունալ հարմարությունները նվիրատվության կարգով սեփականաշնորհել հետևյալ կերպ 37,8 քմ մակերեսից 16,7 քմ սեփականաշնորհել Մարինե Հովհաննիսյանին և Ալեն Սիմոնյանին 17,5 քմ Էռնեստ Բաբայանին և Գայանե Մայիլյանին, իսկ 3,6 քմ թողնել համատեղ սեփականություն:

Կոմունալ տնտեսության և ԲԾԿՄՀԱԿ բաժնի պետ՝ Գ.Սարգսյան

Սոցիալական և առողջապահության բաժնի պետ՝ Է.Եղիազարյան

Կոմունալ տնտեսության և ԲԾԿՄՀԱԿ բաժնի գլխավոր մասնագետ՝ Ս.Խանիկյան